№ 166 Սեպտեմբերի 29 (Հոկտեմբերի 11) 1879 Սեպտեմբերի 29 (Հոկտեմբերի 11) № 166

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներսիսեան դպրոցը։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Մօսկվայից։ Նամակ Երևանից։ Նամակ Զալալ-Օղլուց։ Նամակ Խմբագրին։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։— Բանասիրական։ Նկարագիր Խարբերդի։

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԸ

—

Այս տարի Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը մտնելու սաստիկ շատ ցանկացող մանուկներ կային։ Ինչպէս միշտ, շատ ցանկացողներից քիչերն են ընդունվել։

Բայց ամենացաւալին այն է, որ մանուկներից շատերը հեռաւոր գաւառներից եկած և Ներսիսեան դպրոցում չընդունվելով, ստիպված են կամ վերադառնալ իրանց երկիրը, կրկնապատիկ ծախս և ամեն տեսակ նեղութիւններ կրելով, կամ ճարահատված մնում են մեր քաղաքում և կորչում են այդ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԿԱՐԱԳԻՐ ԽԱՐԲԵՐԴԻ

—

Խարբերդի սահմանն է, արևելքէն՝ Պաղի Մատէն (1) Ջերմուկ (2) Սէվերէկ (3) մինչ ի Տիգրանակերտ (4), Հիւսիսային արևելքէն՝ Բալու (1) Գղի 3) մինչ ի Կարին (7) հիւսիսէն Զարսանճագ և Տէրսիմ (1) մինչ ի յԵրիզա (3) Արևմտեան հիւսիսէն՝ Զմչկածագ (2) Արևմուտքէն Կիւմիշ-Մատէն (1) մինչ ի Սեբաստիա (10) Հարաւային արևմուտքէն Արաբկեր (2) Ակն (3) մինչ ի Շապին Գարահիսար (7) Հարաւէն Շիրայ (1) մինչ ի Մալաթիա (3) Հարաւային արևելքէն Ջնքուշ (2)

Եփրատ գետը Հիւսիսային, Արևմտեան և Հարաւային կողմերէն կը շրջապատէ այս երկիրը, ջուրը քաղաքէն 4-էն 6 ժամ շուրջանակի հեռաւորութիւն ունի։

Քաղաքէն 6 ժամ հեռու լճակ մը կայ, որ ծովակ կանուանի, շատ մը տեսակ ջրային կենդանիներ կը գտնուին, որոնցմէ ձուկը շատ աղնիւ ու համեղ է, սա ի սկզբան փոքրիկ լիճ մ՚ է եղեր, բայց տեղը դաշտային ըլլալուն՝ ջուրը հետզհետէ առատանալով ցամաքը ծածկեր է։ Տեղւոյս կառավարութիւնը աշխատեցաւ սոյն լիճը ծակել, սակայն վարպետի և գործիքի պակասութենէն չը յաջողեցաւ դժբաղդաբար. յաջողութենէն երկու օգուտ կրնայ արտադրել, մին որ ջուրը անջրդի դաշտ մը պիտի ուռոգէ, իսկ միւսն ես պակասած ջրոյն տեղը մշակելու երկիր պիտի բացուի։

Երկիրս՝ դաշտային և լեռնային միանգամայն է մանր բլուրներով և ժայռերով լի, գլխաւոր լեռները են արևելքէն) Մասթար, հիւսիսէն Տէրսիմ (որ Տորոս լեռան շղթայակից է), արևմուտքէն

*) Փակագրեալ թուականները, որոնց առջև որ նշանակուած է, նոյն տեղւոյն (քաղաքն) ջորեպանի ընթացքով քանի օրուան հեռաւորութիւն ունենալը կը ցուցնէ։

տեղ, անգործ մնալով, կամ մտնելով զանազան անբարոյականացնող շրջաններ, մեր արհեստաւորների կամ վաճառականների ծառաներ դառնալով։

Առհասարակ մեր Ներսիսեան դպրոցը վաղուց է որ շեղվել է հիմնադրից իրան տուած ուղղութենից։

Զարմանալի է որ Ներսէսը, այդ ինքնուս մարդը, ոչ թէ միայն մեր ամբողջ հոգևորականութենից աւելի լուսաւոր, առաջադէմ, ժամանակակից գաղափարներ ուներ, բայց իր մտաւոր զարգացմամբ աւելի բարձր էր, քան թէ մեր այժմեան համալսարանական երիտասարդութիւնը, որի ներկայացուցիչները այս բոպէիս Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան մեծ մասն են կազմում։

Ներսէսը, կարծես, իրան գլխաւոր նպատակ էր դրել ընդունել իր հիմնած դպրոցի մէջ գլխաւորապէս Հայութեան համար կորած տեղերից հայ մանուկներին, նոյնպէս և հայ-կաթոլիկներին։

Խորհուրդ կը տայինք դպրոցի այժմեան հոգաբարձութեանը հետևել հանդուցեալ հիմնադրի ուղղութեանը։

Ու ճշմարիտ օրն է աւելի արդիւնաւորը՝ ընդունել մանուկներին այնպիսի տեղերից, որտեղ հայութիւնը արդէն հաստատ արմատներ է գցել, որտեղ հայոց լեզուն ամբոխի մէջ արդէն տարածված է, թէ այնպիսի տեղերից, որտեղ հայը հայերէն չէ խօսում, մոռացել է իր մայրենի լեզուն, օտարացել է, ինչպէս, օրինակ Ռութայիս, Աղնախ, Թէլաւ, Նուխու կողմերը, և այլն։

Ի հարկէ ցանկալի կը լիներ, որ ամեն մի մանուկ որ ներկայանում է դպրոցը, ընդունվեր և ուսում ստանար։ Բայց որովհետև դա անհնարին է, աւելի լաւ է չընդունել այնպիսի մանուկներին, որոնք մի կողմից այնպէս էլ գիտեն հայերէն, հայախօս շրջանի մէջ են ապրում, իսկ ուրիշ կողմից միջոց ունեն մտնել մի որ և է ուրիշ դպրոց, քան թէ սրանց ընդունել և անխնամ թողնել հայութեան համար կորած տեղերից եկած երեխաներին։

Մի թէլաւեցի վրացախօս երեխային, կամ մի հայ ուտիացի մանուկ ընդունելով Ներսիսեան դպրոցը աւելի մեծ օգուտ է բերում, քան թէ ընդունելով և կրթութիւն տալով հարիւր Թիֆլիսցիներին, ղարաբաղցիներին, կամ երևանցիներին։

Չը մոռանանք որ մի հատ աղնախցի կամ մի հատ ուտիացի հայերէն խմացող հայ, վերադառնալով իր երկիրը, դառնում է հայութեան սերմանող իր օտարացած հայրենի շրջանի մէջ։

Աւելի լաւ է չընդունել դպրոցի

Կապան Մատէնի ժայռերը և հարաւէն Շիրոյի քարաբլուրները և Հազար Պապա լեռն, այնպէս որ բնական ամրութեամբ պատնիշեալ է, թէ ի հեռուստ և թէ ի մօտուստ կիրճերէ ու անցքերէ է իր ճանապարհներն։

Հանքերն են առատ պղինձ, (փոքր Մատինէն և Բալուայ յօշինայ Մատէնէն) ոսկի (Տէրսիմի մէջ) որ ծածկեալ կը մնայ, արծաթ (Կապար Մատինէն), աղ (Տէրսիմի մէջ) և հանքածուխ (Բալուայ լեռներուն մէջ), այս հանքերը կառավարութեան հսկողութեան և գործածութեան ներքև են, պղինձը խիստ առատ է, այնպէս որ մէկ լիդր պղինձը 15 դուրուշ արծաթ մէջ. ծախքով յառաջ կուգայ. եթէ այս հանքերը ընկերութեանց յանձնուի, տարեկան քանի մը միլիոն լիդր պղինձ պիտի արտադրեն, (1 լիդր 6 օխայ է)։ Տաք աղբիւր, հանքաջուր ունի, Ջերմուկի մէջ յատուկ բաղանիք չինուած է, ուր հիւանդք ջուրը մտնելով՝ շատ անգամ բժշկուելով դուրս կելնեն։ Ունի նաև սառնատուն մը. քաղաքէն 3 ժամ հեռու դեռնափոր խոռոչ մը, որ բնութենէն քանդակեալ սենեակներուն մէջ ամառուան տօթագին օրերը ձեղունէն ջուր կը կաթէ և կը սառի։

Դաշտը ընդարձակ և բերրի է, զայս ուռոգող յորդահոս անոյշ ջուրի աղբիւրներ ունի, որ առուներ կազմելով աղօրիքի քար իսկ կը դարձնեն։ Այս դաշտը երեք հարիւրէն աւելի գիւղ ունի իր մէջը, որք քաղաքէն 1/4 ժամէն մինչի վեց ժամ հեռաւորութիւն ունին, իսկ իրարմէ 1/4, 1/2 և 1 ժամ հեռու են, բերքն է ցորեն, գարի, ոսպ, կտաւատ (որմէ ձէթ կելնէ) բամբակ և աֆիոն և այլն։

Քաղաքը լեռան վրայ չինուած, օդը առողջարար և բարեխառն է, հնութեանց մասին քայքայեալ բերդի մ՚աւերակ կայ։ Պարտէզներն շրջապատած են զքաղաքը, որ շատ տեսակ պտուղներ յառաջ կը բերեն, անուանի է նուշը, տանձը, խնձորը, սերկևիլը, ծիրանը և թութը, չերամի որդ սնուցանելու համար շատ մը թթենի կայ, բարտի ծառեր չէնքի կը գործածուին, այս պարտէզներուն մէջ մեղր տուող մեղուի փեթակներ ալ կը սնուցանեն. նաև խաղողի այգիներն ալ շատ են, յորմէ առատ և աղնիւ գինի կելնէ. քաղաքը գիւղերով հանդերձ 120 հազար բնակիչ ունի, որք 3 ցեղէ կամ ազգէ են, 60 հազարը հայ, 20 հազարը

թիւրք կամ տաճիկ, և 40 հազարը զըզբաշ, և մահմետական քիւրդ են։

Զարսանճագ և Տէրսիմն՝ որք շատ մը գիւղեր, աւան և գիւղաքաղաք ունեն, գրեթէ խարբերդի գիւղերը կը համարուին. սոցա մէջ շատ անտառներ կան, որ քաղաքիս վառելու փայտը ատի կը մատակարարուի, նաև ատ մէկ միլիոն ոչխար սնուցանող վայրեր կան, որոնցմէ երկրիս հարկաւոր միսն, իւղը, պանիրը և բուրդը կը հայթայթի, ունի նաև բերրի արտեր ուր ցորեն, գարի, բամբակ. կը լլան իրենց եղածին չափովը։

Տէրսիմ և Զարսանճագ ի մի հաշուելով 140 հազար բնակիչ ունին, որոնց 100 հազարը քիւրդ 10 հազարը թիւրք և 30 հազարը նաև հայ են. ներուի ատանօր այս վիճակագրի քանի մը մասնաւոր տեղեկութիւններ տալ։ Զարսանճագը՝ եթէ Տէրսիմէն կը տարբերի այն ես իր հպատակութիւնն է. սոքա աւելի երկրագործ և արհեստաւոր են, իսկ Տէրսիմ կէս անկախ և ինքնագլուխ քիւրդեր են, որ զըզբաշ (կարմիր գլուխ) կանուանին, սոքա խաշնարածութեամբ, աւազակութեամբ և նուազ երկրագործութեամբ կապրին. բուն Տէրսիմի մէջ 10 հազարէն աւելի հայ չը կայ, 90 հազար քիւրդ են, իրանց մէջ յաճախող հայ մանրավաճառաց և արհեստաւորաց երբէք չեն վնասեր, և սիրալիր ընդունելութիւն մը ցոյց կը տան, ընդհակառակը տաճիկները երբէք չեն սիրեր, սոքա մանաւոր կրօն մը չունին. գրականութիւն և օրինադիրք ալ չունին, Սէյիտ անունով ցեղական յաջորդութեամբ կրօնաւորներ ունեն, որք բերանացի խրատ կը խօսեն և քնարաւ կերգեն. գրեթէ աւանդութեամբ է սոցա կրօնը, մաս մը քրիստոնէական արարողութեանց աղաւաղումը, մաս մ՚ ևս պարսից Ալիին աղանդին հետևողութիւնը վերջապէս խառնուրդ մ՚է. ասոնք գրեթէ մեծաւ մասամբ հայոցմէ սերեալ են, ժամանակին բռնութիւնը, հալածանքն ու ոգևորութիւնը ստիպած՝ այսպէս լեզունին փոխել և քրդանալ, վասն այս սէր և համակրանք ցոյց կը տան. եթէ լոյս և դաստիարակութիւն տրուի, հայութիւնը կամ քրիստոնէութիւնը ընդունելու տրամադիր ցեղ մը են։ Զարսանճագի հայ երկրագործներն թէև սրատ և արիասիրտ մարդիկներ են, բայց թիւրք պէյերու բռնութեանց

տակ ճնշեալ գերիներ էին, այժմ ազդիս աշխատութեամբը և անձանձրոյթ թախանձանքովը, չնորհիւ նաև կառավարութեան քիչ մը չունչ առած են։ Այս երկու վիճակին վրայ շատ է խօսելիք, բայց ստիպեալ պիտի լռեմ.....

Ինչպէս արդէն ծանօթ է իշխող կառավարութիւնը օսմ. տէրութիւնն է, տիրող ազգը թիւրքն է։ Երկիրս անկախ միութասարիֆութիւն է, որ ուղղակի կեդրոնին Կ. Պոլսոյ հետ կը բանակցի, և նմա պատասխանատու, իր կառավարութեան իշխանութեան ներքև են, Պախրը Մատէնի միութասարիֆութիւնը, Սիներէկի, Ջերմուկի, Ջնքուշի, Բալուայ, Զմչկածագի, Կապար Մատէնի, Արաբկիրի և Ակնայ գայմագամութիւնք և միւտիրութիւնք, նաև Զարսանճագի մէջ Բերդակի միւտիրութիւնը և Փէրիի գայմագամութիւնը, ուրը դատական առեան, մի մաքսատուն և թղթատարի ու հեռագրոյ կայան ունի։

Պաշտօնական լեզուն տիրող ազգին լեզուն, է թէև ամեն դատարանաց մէջ հայ ժողովականներ կան, բայց մեծամասնութիւնը թիւրք են, կարծիքն ու քուէն թէև ազատ, այլ բռնադատեալ, տիրող ընդհանուր օրէնքը՝ կաշառատուին և կաշառառուի, այն է պաշտօնէին կամեցողութիւնն է։

Թրքերէն կազմեալ ոստիկանութիւն մը կայ է որ աւելի վրդովիչ և հարստահարիչ է քան թէ ապահովիչ։

Հայերը զինուորական ծառայութենէ ազատ են, որուն փոխարէն ամեն արու ծննդեան օրէն սկսեալ մինչ ի մահ 30 դրուշ արծաթ դրամ (պէտէլը ասքերկէ) անուամբ տուրք մը վճարելու պարտաւոր է։ Այս երեք ազգերը միմեանցմէ գոհ, իսկ կառավարութեան պաշտօնէից յոռի ընթացքէն դըժգոհ են։

Հոս արտերը տէր ունին, մշակողները մարապայ կը կոչուին, բերքին տասանորդը կառավարութիւնը առնելէն վերջը՝ մնացածը կը բաժնուի մէջ երկրի տիրող և մարապայի, սերմը երկրատէրէն կը տրուի, իսկ մշակելու գործիքները, եզն ու ամեն աշխատութիւնք մարապային պարտիքն է։

Երկիրը այն աստիճան մշակուած է, որ ճանապարհներէն զատ ուրիշ անմշակ տեղ մը չէ մնացեր, ասի ժրաջան երկրագործներ ունենալուն ա-

*) Փակագրեալ թուականները, որոնց առջև որ նշանակուած է, նոյն տեղւոյն (քաղաքն) ջորեպանի ընթացքով քանի օրուան հեռաւորութիւն ունենալը կը ցուցնէ։

ՄԷՋ հարիւր Թիֆլիսցի, հարիւր երևանցի, հարիւր ղարաբաղցի, քան թէ չընդունել մի քուԹայիսեցի, մի Թէլաւեցի կամ մի ուտիացի հային։

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան ուշադրութիւնն ենք դարձնում մեր յայտնած մտքի վրա։

Այն մարդիկ, որոնք չունեն իրանց սեփական դատողութեան ընդունակութիւն, չունեն իրանց սեփական աշխարհահայեցողութիւն, իրանց սեփական ինիցիատիվ, գոնէ կուրօրէն հետևէին հանգուցեալ Ներսէսի պէս հանճարեղ մարդու գծագրված ուղղութեանը....

Մենք անհնարին չենք պահանջում, չենք պահանջում մեր բարձր ուսում ստացած մոլեռանդներից, որ նրանք բարձրանան մարդասիրութեան, անկողմնապահութեան և ազգային լայն հայեացքների այն աստիճանը, որ անխտիր ընդունեն Ներսիսեան դպրոցի մէջ կաթոլիկ և բողոքական հայ մանուկներին, ինչպէս այդ անում էր այն մեծ մարդը, Ներսէսը, որի կորուստը մեզ ամենքիս համար մինչև այսօր զգալի է....Այդ տեսակ հայեացքների անընդունակ են մեր բարձրագոյն ուսում ստացածները։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Սեպտեմբերի 19-ին

Այս թղթակցութեան հետ միասին ուղարկում եմ ձեզ և մի նկարագրութիւն այն ազգային հանդիսի, որ կատարվեցաւ Մոսկվայում, 16-ին սեպտեմբերի։ Ինչպէս ձեզ յայտնի է այդ օրը կատարվեցաւ մեր քաղաքում հայոց Ս. Խաչ եկեղեցու հարիւրամեայ Յոբելեանի հանդէսը։ Եթէ կընդունէք իմ յօդուածը, կարող էք տպագրել նրան ձեր լրագրի բանասիրական մէջ։

Իմ կարծիքով՝ ամենայն միջոց, որ կարող է մասամբ միացնել մի հասարակութեան ցրված և միմեանց մէջ որ և է հասարակական կապեր չունեցող անդամներին և գոնէ արհեստական կերպով յարաբերութիւններ հաստատել նրանց մէջ,—դա այդ տեսակ հանդէսներ են, որոնց նմանը, տարաբաղդաբար շատ սակաւ է լինում Մոսկվայում։ Այդ իսկ պատճառով մի ազգային հանդէս, մի ժողով, մի ճառախօսութիւն, որոնք կարող էին ուրիշ տեղ նշանակութիւն չունենալ, այդտեղ մեր աչքում ունեն մեծ կշիռ, մեծ նշանակութիւն, վերջապէս մեզ վրա մեծ ազդեցութիւն ունեն....

Այս հանդիսի մէջ առանձին ուշադրութիւն և համակրութիւն գրաւեց Լազարեան ճեմարանի տեսուչ Քանանեանցի գեղեցիկ և ազդու ատենաբանութիւնը, որից ես իմ յօդուածում քաղուածք եմ արել և յոյս ունեմ շատ հետաքրքրական պէտք է լինի ձեր լրագրի համար։ Այդ գեղեցիկ ճառը, որ ընդարձակ չէ, մանաւանդ նշանաւոր է իբրև Լազարեան ճեմարանի տեսչի, 200 հայ մանուկների դաստիարակի և պաշտօնական անձի մտքեր։

Ցոյս ունեմ որ յօդուածս հիւրասիրութիւն կը գտնի ձեր լրագրի էջերի մէջ, իսկ այժմ խօսենք ուրիշ հարցերի մասին։

Ամբրոսիոս վ. Ռուբինեան սկսել է արդէն հանգանակութիւն անել և ժողովել է այստեղ մօտ 1500 ռուբլի։ Ասում են պատուելի հայր սուրբը Նիժնի-Նովգորոդի մէջ իր եղած ժամանակ 2300 ռուբլու քաթան է գնել իր ապագայ երկրագործական դպրոցի աշակերտների համար, որոնք դեռ ևս չը կան....Զուր եղան իմ բոլոր աշխատութիւնները իմանալ թէ որտեղ է լինելու այդ երևելի ուսումնարանը՝ Կ. Պոլսում, ինչպէս որ նշանակված է Էջմիածնից նրա բերած կոնդակի մէջ, Էրզրումում, Վանում թէ վերջապէս Ս. Էջմիածնում, ինչպէս մի քանի չար լեզուներ խօսում են.... Ուսումնարանի ձեռնարկները (երկրագործական գիտութեան) հայր սուրբի խօսքով պիտի շուտով թարգմանվեն ֆրանսիերէնից։ Իսկ ինչ որ վերաբերվում է այդ ուսումնարանի տեսչին, դա նշանակված է ոմն Ամասեան, որ իբրև պաշտօնական անձն, միշտ Կ. Պոլիս պիտի նստի, անգամ եթէ այդ ուսումնարանը լինի Էրզրումի կամ Վանի մէջ....

Լսում ենք որ Թիֆլիսում յատկապէս Ռուբինեան վարդապետի ժողոված փողերը պահելու համար կազմված է մի յանձնաժողով, բայց ոմից, ինչ և որքան անձինքներից է բաղկացած նա,—այդ չը գիտենք։ Ինչ է անում Թիֆլիսի յանձնաժողովը. արդեօք վարդապետի ձեռքով ժողոված բոլոր փողերը նրան են ուղարկվում, արդեօք և առնուած քաթանը նրան կուղարկվի, արդեօք 2300 ռուբլու քաթանը կը ծախէ, փող կը դարձնէ յանձնաժողովը, թէ կը պահէ, որ փտի....ինչ դիտաւորութիւններ ունի նա։

Հոկտեմբերին կը սկսվի Ստեփաննոս Նազարեանցի մահարձանի համար հանգանակութիւն,—մի առաջարկութիւն, որի նպաստելուն այնպիսի անկեղծ համակրութիւն ցոյց տուեց «Մշակը» դեռ. մայիս ամսի մէջ։

Նոյնպէս դիտաւորութիւն ունի հայոց հասարակութիւնը երկու թոչակ հիմնել հանգուցեալի անունով ռուսաց համալսարաններից մինի մէջ հայազգի երիտասարդների համար։

Խնդրում եմ թէ այս նամակին և թէ Մոսկվայի հայոց եկեղեցու յոբելեանի նկարագրութեանը տեղ տալ ձեր լրագրի էջերի մէջ, իսկ մի քանի օրից յետոյ կուղարկեմ մի հարևանցի քննութիւն տ. Ցակոբ Սուրէնեանցի «Հարիւրամեակ» գրքի մասին, ինչպէս որ ձեզ խոստացած եմ։

Գ. Խ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

17 սեպտեմբերի

Թեմական դպրոցի վրա պէտք է գրել. ահա այն պարտականութիւնը որ ես յանձն առայ կատարել նախընթաց նամակիս մէջ։ Ներկայ ուսումնական տարուայ սկզբում Երևանի թեմական դպրոցը մի նոր շրջանի մէջ է մտնում, նոր և հնախառն հոգաբարձութիւն, նոր ուսուցիչներ հինների վրա աւելացրած, ուսումնարանի շէնքը կիսով չափ կարկատած, հինները նորերի հետ միացրած՝ մի ամբողջութիւն կազմած, իսկ տեսուչը դարձեալ նոյնը թողած։ Արդեօք խաղաղ ձեռք ձեռքի տուած կը գործեն յիշեալ անձինքը դպրոցի շահերի համար. այդ հարցը այսօր շատերին զբաղեցնում է։ Հին և արձակված ուսուցիչները ունեն իրենց կողմը մի կամ երկուսը ներկայ հոգաբարձութիւնից։ Դըբանք ամեն կերպ աշխատում են դպրոցի ներկայ կազմակերպութեան վրա յարձակվել։ «Տեսուչը և նոր հրաւիրված ուսուցիչները անհամապատասխան են իրենց կոչման մէջ», այդ բառերը նոքա ասում են ամեն տեղ։ Այդ անձինքը, որոնք, կարելի է ասել, անհաչտ աչքով են նայում դպրոցի ներկայ կազմակերպութեան վրա, աշխատում են վայր ձգել թէ դպրոցի և թէ նորա մէջ գործող անձանց պատիւը։ Արդեօք կայ մի առիթ, մի զօրաւոր պատճառ, որ դրդում է այդ պարոններին դէպի այդպիսի ընթացքը, այդ միայն կարելի է վերաբերել տեսչի կառավարչական տակտ չունենալուն։ «Ես ինքս աւելի լաւ եմ ճանաչում պ. Բէդնազարեանին և աւելի լաւ քան թէ դուք», ասաց ինձ այս տարի Դարաչիչագում մեր հոգաբարձուներից մինը, աւելի հմուաք մեր ուսումնարանական գործերին, բայց չունենք մենք մարդիք։ Ցուէք մեզ նորանից լաւը, մենք այսօր նորան ճանապարհ կը գցենք. նա չը գիտէ վարվել, աւելացրեց պ. հոգաբարձուն, գորան ապացոյց կարող է լինել նորա այսօրվայ թշնամիները։» Անուրանալի և կատարեալ համակրութեան արժանի է պ. Բէդնազարեանի եռանդոտ գործունէութիւնը, մենք կը մեղանչէինք ճշմարտութեան դէմ, եթէ այլապէս խօսէինք։ Բացի իրան յանձնված գործը կատարելուց, նա մի և նոյն ժամանակ և ժողովրդական անձն է, նորան շուտ շուտ կարելի է տեսնել շրջապատած քաղաքացիներով, որոնց իր ազդու խօսքերով յորդորում է մի որ և իցէ հասարակաօգուտ հիմնարկութեան սկզբնաւորութեան կամ մի այլ ազգային խնդիր լուծելում։ Բայց կայ մի այլ և աւելի զօրաւոր հանգամանք, որը առիթ է տալիս հայ դպրոցներում միշտ կուսակցական ոգու տիրապետելուն։ Մինչև այսօր հոգևոր կառավարութիւնը չը մտածեց մշակել մի կանոնադիր (уставъ) մեր դըպրոցների համար։ Մինչև այսօր մենք չը գիտենք ինչ պարտականութիւններ ունեն լցուցանելու թեմի առաջնորդը դէպի դպրոցը, թեմական տեսուչը, տեսչի և վերջապէս ուսուցիչների յարաբերութիւնը դէպի առաջինը։ Այսօր մենք հայր

պացոյցն է, որք նահապետական գործիքներով կը գործեն, որ աւելի աշխատութիւն կը պահանջի, 56 օխայ կշռող գրիւ մը ցորենի սերմանելու վայրն 10 հատ օսմ. հարիւրնոց լիրայի կը վաճառուի և կը գնուի, հողը արգաւանդ է, այնպէս որ հողատերը իր վճարած ստակին գրեթէ հարիւրին 7-ը տարեկան շահ կառնու, ինչպէս արդէն յիշուած է բերքն է առատ ցորեն, բամբակ որ բաւականէն աւելի լինելուն երկրէն դուրս կը խրկուի, աֆիոն (նոր մուտ գտած է և հետզհետէ ընդհանրանալու վրայ է, այժմ տարին 20 հազար օխայ, իսկ մի քանի տարի վերջը մինչ ի 100 հազար օխայ արտադրելու յոյս կայ) մետաքսի խոզակ, ահա այս երեքը երկրին վաճառականութեան ոգին և կենդանութիւնն են և այն և այն։

Վաճառականութիւնը երկրիս ծովեզերքէ ունեցած հեռաւորութեան, ճանապարհներու անհարթութեան և հաղորդակցութեանց մասին ունեցած դժուարութեանն համար կէս ծաղկեալ կրնայ համարուիլ, գլխաւոր առևտուրը ներքին է ի մէջ իւր և իւր շրջակայից է, խիստ քիչ արտաքին բերքերու կարօտութիւն ունի, որք են խահվէ, շաքար, երկաթ, կաշի (դոմէշի), օճառ և մեծաւ մասամբ զգեստեղէնք, որոնց համար 75 հազար լիրայ տարեկան երկրէն դուրս կելնէ, իսկ դուրս խրկուելիք վաճառքներն են՝ բամբակ, հաստ կտաւ, աֆիոն, մետաքս, վայրի կենդանեաց մորթք, մեղրամոմ, նուշ, ծիրանի, չոր թութ, գինի և այն որոնցմով 90 հազար լիրայ մուտք կունենայ, որ 15 հազար լիրայ կը շահի իւր տարեկան արտաքին առևտուրէն։ Բայց կառավարութիւնը, որ իւր առած տուրքերէն երկրին վարչական ծախսերէն աւելցուցած 30 հազար լիրայ որ կեղրոնը կը խրկէ 15 հազար լիրայի կորուստ կունենայ, սա ևս պանդխտութեան գնացողք՝ դուրսի երկիրներէն շահելով կը բերեն, որով երկիրը իր հաւասարակշռութիւնը կը պահէ։ Այս հաշիւները ոչ թէ ճիշդ, այլ ճշտութեան մօտ ենթադրութիւններ են, զի ասա լուսաւորեալ քաղաքաց նման ելևմտից հաշուեկշիռ չը կայ, քանիցն, առաւել երկիրը պիտի հարստանար եթէ արհեստն ալ երկրագործութեան համեմատ յառաջ երթար, միայն մետաքսեղէնի ընտիր գործարան մը կայ, որ ամենիւ կերպաս և մետաքսեղէնք կը տարազագործեն, եթէ բամբակի և մանածի գործարանք լինէին ասա, անհամեմատ առաւելութեամբ պիտի օգտէր երկիրն, սա պակասը լրացնող դրամատէր կը պակսի, իսիւ թէ լիներ, յայնժամ անգործ ժողովրդեան գործ ըլլալէն զատ գործարանատէրն ալ իւր ստակից հարիւրին 20 շահ առնելուն երբէք թող չը կասկածի. արհեստներն են կօշկակարութիւն, դարբնութիւն, ոսկերչութիւն, դերձակութիւն, հիւսնութիւն և այն, սոքա գրեթէ կէս աստիճան յառաջ գնացած են։

Որչափ որ քաղաք և գիւղ ի մի հաշուելով բընակչաց մեծամասնութիւնը հայ է, բայց և այնպէս եթէ քաղաքը զատ հաշուուի, մէկ հայուն փոխան 3 տաճիկ կայ, քաղաքիս 4 թաղին մէջ 5000 ազգաւ հայ բնակիչ կայ, գիւղերէն ոմանք բոլորովին հայ են, կան ոմանք ալ որ հայոց հետ խառն թիւրք կամ քիւրդ կը բնակին։

Երկրագործութեան գործն և ժիր մշակները հայերն են, գրեթէ 30 տարի առաջ հայք կտոր մը երկրի տէր չէին, բոլոր դաշտը տաճիկ պէյերու և աղաներու ձեռքն էր, որք ժամանակին բռնութիւնով ձեռք ձգած են, այժմ թէ քաղաքցի և թէ գիւղացի հայք բաւական հողու տէր եղած են, մէկ ութերորդ մասը հայոցը կը հաշուի, սակայն միշտ վաճառողը թիւրքն է և գնողը հայը, եթէ այսպէս շարունակուի դուն ինչ միջոցի մէջ կէսէն աւելին հայոց պիտի պատկանի։

Հայք վաճառականութիւնը և արհեստագործութիւնը բոլորովին իրենք ստանձնած են, այնպէս թէ թիւրք վաճառականքն արտաքսուած լինէին, քաղաքականապէս թէև հպատակ են հայք, այլ նիւթապէս տիրած են թրքաց, որով միշտ պատկառելի դիրք մը ստացած են։

Թիւրքերն դատարկաշրջիկ կենցաղ մը ունեն, մաս մը կառավարութենէն առած ամսականաւը, մաս մ'ևս արտի և ուրիշ կալուածային եկամուտով կապրին։

Որչափ որ հոս նիւթապէս հայք կը յառաջադիմեն, բայց բարոյապէս խիստ անտարբեր են, քաղաքի 4 թաղին մէջ 4 եկեղեցի և իւրաքանչիւր եկեղեցւոյ բակը մէկ դպրոց կայ, որ հասարակ ընթերցանութենէ զատ բան մը չեն սովորեր, գիւղերը մեծաւ մասամբ եկեղեցի և քահանայ ունին, իսկ դպրոց ունեցող գիւղ հազուադիւտ են։

Զորս վանք կայ, որք ոչ միաբան և ոչ օրինաւոր վանահայր ունին, այլ ժամանակի առաջնորդին քսակը ուռճացնելու կը ծառայեն։

Առաջնորդութիւն ալ անկերպարան վիճակ մը ունի, և չիտակը խօսելով այս մասին կեղրոնական վարչութիւնն ևս կերպով մը անփոյթ գտնուած է, առաջնորդական փափուկ պաշտօնը երբեմն տեղացի անուս վարդապետաց ձեռքը խաղալիկ դառնուցած էր, այժմ իսկ անքաղաքագէտ. ապիկար վարդապետի մը յանձնուած է, որ ոչ ազգին շահերը և ոչ իսկ ինքզինքը պաշտպանելու կար ու կարողութիւն ունի։

Սահմանադրութիւնն ալ չէ գործադրուել, սակայն ոչ օրինաւոր ժողովներ կազմուած է, ոչ արձանագրութիւն և ոչ ազգային տուսար ունին, միայն 30 անձերէ բաղկացեալ դաւառական ժողով մը քուէով ի վաղուց անտի ընտրուած է, որ այս ևս տարին վեց ամիսն անգամ մը հազիւ նիստ կը կազմէ և կը ցրուի առանց արդիւնքի, այս երեսփոխաններէն զէթ մէկ քանին Սահմանադրութեան ոգին հասկնալու մասին արգահատելու վիճակ մ'ունին։ Հոս առաջնորդութիւնը ուրիշ նշանակութիւն ունեցած է, ազգային եկամուտի արկղը դառնալ, ինչել հանգիստ, փառաւորապէս ուտել և ապահով ապագայ մը կազմել իր անպաշտօն օրերուն համար։

Բողոքականութիւնը (փրոթէսթանդիզմ) հայոցս մէջ օր քան զօր ծաւալ գտնելու վրա է, Ամերիկայի Պորտ ընկերութենէն 4 միսիոնարք մշտակի բնակութիւն հաստատած են հոս և կեղրոն ըրած են շրջակայ գաւառաց. իրենց կեղրոնի ընտրութեան մասին սխալած չեն. ինչպէս աշխարհագրական դիրքը ցոյց կը տայ որ արժան է, քաղաքիս մէջ 2 ժողովարան և երկսեռ 2 վարժարան ունի և մի ալ ուսումնարան, նաև շատ մը գիւղեր տեղացի քարոզիչներ խրկած են, ոմանց մէջ ալ դպրոց բացած են, իրենց թիւը տեղւոյս ազգայնոց մէկ տասներորդը կամ վեց հազար կրնայ համարուիլ, դեռ ևս ծաւալ պիտի գտնէ, ցորչափ ազգը այս վիճակը անկարևոր նկատէ, հոգ չէր որ եթէ միայն յեկեղեցւոյ բաժնուէին, այլ ցաւալին այն է որ ազգային զգացումները կը մարին նոցա սրտերում, և ազգին ապագայ փրկութեանը յուսահատ հետևաբար անտարբեր են։

Կաթոլիկութիւնը (պապականութիւն) իր անչնչան սակաւաթուովը գրեթէ մուտ գտած չէ։

Տգիտութեան խոր խաւարով պատած է Խարբերդի հորիզոնը. այս մշուշին մէջ մերթ ընդ մերթ ընկերութիւնք ասուպի նման կը փայլեն և նոյնհետայն անհետ կը լինին։

Բուրաստանի (Մէզրաայի) երբեմն անձնուէր, իսկ այժմ «Արարատեան» ընկերութիւնը, որ Տէր-սիմի վիճակին բարենորոգմանց քննիչ կարգեալ կառավարութեան կողմէ հոս եկող Երզնկացի մեծ. Կիրակոս էֆ. Ղազանճեանի քաջալերական բանիւքը յարութիւն առաւ և մասնաւորապէս յիշեալ ազգասէր էֆէնտիի ջանիքը այժմ երկսեռ վարժարան մ'ևս ունի, յարատևութիւն կը մաղթենք։ Հիւսէյնիկ գիւղի Հայկեան ընկերութիւնը, որպէս թէ կենդանի, բայց չունչ չունի չը շարժիր, և դեռ քանին թուեմ որ ի ծնանելն մեռան։

Իսկ ասոնցմէ ի բաց առնելու է քաղաքին Սմբատեան ընկերութիւնը, որ իր 15 տարվայ անդադրդադր չարունակութեամբը երբեմն աղօտ, երբեմն ևս պարզ լուսոյ առկայծեալ կանթեղ մը եղած է իւր երկսեռ վարժարանովը, թէև խաւարաբեր զուլուներ սորա քայլերուն խոչ և խոթ հանդիսացան և ծաւալումը սեղմեցին, սակայն այժմ գրեթէ յաղթանակած կը շարունակէ իւր ընթացքը և ազգին փրկութեան ու ազատութեան վաղահաս ապագայն ողջունելու յուսով իւր տկար քայլափոխները կը փութացնէ սակայն, նիւթականապէս ունեցած անձկութիւնը զինքը սահմանափակ ըրած է, որով յուսացուածին չափովը արդիւնք տալու յակամայս անկարող դատապարտուած է, այսպիսի ընդարձակածաւալ վայրի մը մէջ կանթեղ մը միայն իւր շուրջը լուսաւորելու հազիւ հազ կը զօրէ։

Ահա այս է Խարբերդի ազգային վիճակը կամ ներկայ կացութիւնը այսպիսի դիրքի մը մէջ կամ լաւ ևս է ասել բազմահայ վիճակի մը համար օգնական ձեռք մը անհրաժեշտ է, ամեն կարևորներէն է, որ վաղէ նորա բոլորին վրայ յուսոյ ջահ մը, որուն ճաճանչները տարածուի համատիւռ իւր շրջականները։

Սիսակ Թէրվիզեանց

Այվազեանին և Պռոչեացին ճանաչում ենք թեմական տեսուչներ, շատ լաւ. արդեօք դրանց վերահսկողութեանն է ենթարկվում Երևանի թեմական դպրոցը կամ այդ քաղաքի ծխական կամ իգական դպրոցները, այդ չը գիտենք։ Մեզ յայտնի է և մինչև անգամ կարելի է հասկանալ թեմական տեսուչ բառերի նշանակութիւնից որ նա թեմի մէջ գտնվող բոլոր դպրոցների վրա հսկելու իրաւունք պէտք է ունենայ, բայց յանկարծ Կաթուղիկոսի կոնդակով հայր Մելեանցը նշանակվել է տեսուչ Գայիանեան դպրոցին, զարմանալի հակասութիւններ. ոչն է երկուսից դարձեալ չը գիտենք։ Անտարակոյս վաղը կամ միւս օրը մի կռիւ հայր Մելեանցի և թեմական տեսուչների մէջ տեղի է ունենալու, ամեն մինը մի մի կոնդակ ձեռքերին բռնած պէտք է իրենց տեսուչ հրատարակեն։ Բայց եթէ մեր բոլոր դպրոցները ենթարկվէին մի նախագծի, մի տեսչի, բոլոր ծխական և իգական դպրոցների նիւթական հասոյթները կենտրոնական թեմական դպրոցի դրամական արկղում, այն ժամանակ հարկ չը կար այդքան ուսուցիչների, որքան կան այժմ Երևանում, վասն զի թեմական դպրոցի վարչութիւնը կարող էր դասատուութեան ժամերը այնպէս յարմարեցնել, որ այդ դպրոցի ուսուցիչները ազատ ժամերում դաս աւանդէին և միւս ծխականներում. դորանով բացի դպրոցներում մի ուղղութիւն և մի մեթոդ տիրելուց յետոյ աւելի օգուտ կը տայինք դպրոցների նիւթական մասին։ Որպէս վերևում յիշեցինք այս տարի թէ դպրոցի վերանորոգութեան և թէ նոր եկած ուսուցիչների համար սովորականից աւելի պէտք է փող միասի։ Անհեռատեսութիւն էր պ. հոգաբարձուի կողմից Թիֆլիս նստել և իրեն դիմող ամեն մի տիրացուի 700 կամ 800 բուբլիով վարձել՝ Երևան ուղարկել. աւելի լաւ կը լինէր երեքը կամ չորսը աւելի հըմուտը և արժանաւոր լինէին, քան թէ այդչափ և անարժանները ուսուցչական կոչման մէջ։ Թող չը վիրաւորվեն յարգոյ ուսուցիչները, մեր ակնարկութիւնը բոլորի վրա չէ, այլ այն բաղդաւորների, որոնք Թիֆլիսի կոնսիստորիայի գրագրութիւնից յանկարծ այստեղ ուսուցչական ամբիոն են բարձրացել։

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ՁԱԼԱԼ-ՕՂԼՈՒՑ

—

Սեպտեմբերի 10

Այս օրերս դէպքի բերմունքով պատահեցայ Ջալալօղլի և կամենալով անձամբ տեսնել ներկայ տարոյս մէջ Ջալալ-օղլեցոց արած բարեգործութիւնները, որոնց համար պ. Լօռեցին և ուրիշները ձեր պատուական լրագրի միջոցաւ հրատարակեցին և որոնց համար շատերը հաւատ չէին ընծայում, ուստի առաջին պարտքս համարեցի գնալ և տեսնել նրանց երկսեռ ուսումնարանները։

Ուսումնարանները գտնվում են մէկ ընդարձակ բակի մէջ, միայարկանի և մաքուր սենեակներով։ Տղայոց ուսումնարանը առ այժմ բաղկանում է երեք պատրաստական և մէկ առաջին դասատնից, իսկ օրիորդացը երկու պատրաստականից։ Դրանց մէջ աւանդվում են կրօն, հայոց և ռուսաց լեզուներ և ուրիշ առարկաներ. օրիորդաց ուսումնարանի մէջ սովորեցնում են և ձեռագործութիւն։ Ուսմունքն աւանդվում են նոր մանկավարժական ձևով, աշակերտներն և աշակերտուհիքն ունեն իրանց միաձև և գեղեցիկ հագուստը, աշակերտաց թիւն հասնում է 125-ի և օրիորդացը 60-ի. ունեն չորս ուսուցիչ և երկու վարժուհի, ուսուցիչներից մէկը կատարում է տեսչութեան պաշտօնը. երկու ուսումնարաններն ևս գտանվում են շատ բարեկարգ դրութեան մէջ, և եթէ այս ուսումնարաններն այսպիսի բարեկարգութեամբ երկար տեղութիւն ունենան, որ սրտով կը ցանկանամ, կարող են Լօռու նոր սերունդին մեծ օգուտ հասցնել։ Այստեղ ուզեցայ իմանալ թէ արդեօք պ. Լօռեցու վերջին յօդուածի մէջ յիշած պ. Սահակեանը և այրի Վարդիթեր Այվազեանը հասուցած են իրանց նուէրները թէ ոչ. պատասխանը բացասական էր։ Պ. Սահակեանցի համար լսեցի, որ ամենքի առաջ խոստանալիս է եղել, որ պէտք է անպատճառ հատուցանէ 1500 ր. և երբ ուսումնարանի վարչութիւնը հրաւիրում է նրան կատարել իր խոստումն, նա հանում է գրպանից մէկ հնամաշ հաշուէթուղթ, որով հոգաբարձուներից մէկին, այն է Ցէր-Գրիգորեանցը պարտ է նրան տալ 1000 բուբլ և տակուն 500 բուբլ և այդ հաշուէթուղթը առաջադրում է իր խոստացեալ նուէրի փոխարէն, իսկ Ցէր-Գրիգորեանը պատասխանում է, որ նա Սահակեանցին ոչինչ չէ՞ պարտ, այլ ընդհակառակն Սահակեանցից նոյն հաշուէթղթով պէտք է ստանայ 1000 բուբլ։ Որպէս երևում է, այս վերջին ժամանակներս մօդա է դարձել վիճելի ապառիկներն և մուրհակներն նուիրել ազգային բարեգործութեանց համար..... Իսկ այրի Վարդիթերի համար ասացին, որ նա մտադիր է եղել յատկացնել ուսումնարաններին մէկ նշանաւոր գումար, բայց իր եղբայրն, տաղեր որդին և իր ազգական Ջալալ-օղլեցի քահանան արգելք են եղել, ասելով որ ուսումնարանին նուէր տալով նրա որդոց հոգիներին փրկութիւն չի լինի. և համոզել են նրան այդ նուէրը տալ Ջալալ-օղլու նորակառոյց եկեղեցուն առնելով մէկ արծաթեայ մեծ խաչ կաթողիկէի համար և ուրիշ եկեղեցական զարդեր և անօթներ։ Այսուամենայնիւ կան դարձեալ մի քանի պարտնայք որ պ. Լօռեցու հետ միասին յոյս ունեն՝ որ այդ նուէրներն ուսումնարանները կըստանան անպատճառ. տացէ Աստուած որ նրանց յոյսը կատարվի...ուսումնարաններից շատ դոհ մնալով գնացի դէպի նոր կառուցվող եկեղեցին. դա չինվում է մէկ գեղեցկադիր տեղի՝ ձորի գլխին, որի միջով անցնում է նոր չինված գեղեցիկ մեծ ճանապարհը և սրնթաց կերպիւ վազում է Զորագետը։ Եկեղեցին արդէն հասել էր կաթողիկէին. պատերն ևս փափուկ քարից են, իսկ միջի սիւներն և կամարները կարծր ապառաժ քարից են։ Այս եկեղեցին սկսած են եղել չինել սրանից քանի մի տարի առաջ և վերջացնելուն պէս փուլ գալով և այնպիսի աւաղելի դրութեան մէջ քանի մի տարի մնալուց յետոյ, այս տարի ձեռք են տուել նորից չինելու. եկող տարի եկեղեցու չինութիւնը բոլորովին կը վերջանայ և դուրս կը գայ մէկ հոյակապ և գեղեցիկ Աստուծոյ տուն։ Եկեղեցին տեսնելուց յետոյ գնացի տեսնելու Ջալալ-օղլեցոց երրորդ մեծագործութիւնն, այն է՝ իրանց ձորի ճանապարհը. և իրաւ, այս այն ճանապարհը չէր, որ անցեալ տարիներն տեսած էի. այն ժամանակը մէկ սայլ դուրս բերելու համար հարկաւոր էր մէկ քանի լուծ եզն, իսկ այժմ մէկ լուծ եզը կարող է դուրս բերել բեռնած սայլը առանց դժուարութեան, որովհետև կէս վերստի չափ երկայնութիւն ունեցող ահագին ժայռը 30—40 սաժէն բարձրութեամբ ճեղքելով և ջարդելով չինել են մէկ հարթ, ուղիղ և լայն ճանապարհ։ Այս բաները տեսնելով ստուգեցի որ պ. Լօռեցին իրաւացի էր գրած և գոված Ջալալ-օղլեցիներին։

Ջալալ-օղլեցիք գոհ են իրանց թէ ուսումնարանների և թէ եկեղեցու հոգաբարձուներից, բայց լաւ կը լինէր եթէ ուսումնարանաց հոգաբարձուքը ունենային իրանց կանդիդատներ, որովհետև շատ անգամ առևտրական գործերով բացակայելով, չեն կարողանայ ճշդութեամբ հետևել ուսումնարանի գործերին։ Պատմեցին Ջալալ-օղլեցիք, որ իշխանութիւնը իր ծախսով չինելու է ձորի միւս կողմի ճանապարհը, որ շատ դժուար չէ. նա չինելու է նոյնպէս և Դվան լերան այս կողմը, որովհետև միւս կողմը արդէն չինված է։

Այս կողմերն սկսել են դալ անձրևներ. երկրագործները պարապած են աշնան ցանքերով. ուտելիքը առհասարակ թանդ է, ալիւրի պուդը 2 ր. 20 կ., իւղը 15 ր., կարտոֆիլ-ը 50 կ., միսը 2 ր. 80 կ.։

Անցորդ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ալէքսանդրապոլ, 15 սեպտեմբերի

Կարդալով «Մշակ» լրագրի 97 համարում տարված պ. Բաբաջանեանցի նամակը, ես սրբազան պարտք համարեցի պատասխանել և ցոյց տալ ընթերցող հասարակութեանը թէ ինչպէս Բաբաջանեանցի յիշած Ալէքսանդրապոլցու նոյնպէս և իր գրուածները սուտ են և անհիմն տեղեկութիւններ։

Նախ պարոնը յայտնում է թէ ընկերութիւնը կազմված է եղել տասն և հինգ տարի առաջ, եղել է և չէ շարունակվել, երկու տարի հազիւ տեսեց և վերջացաւ, բոլորովին անդամներից անկախ պատճառներով, որոց թիւն էր ութն, իւրաքանչիւր անդամ հատուցանում էր չաբաթական երկու կոպ. Թող հաշուէ ընթերցողը միթէ կարող է երկու տարվայ մէջ գոյանալ 600 ր., ինչպէս գրում է երևելի հաշուադէտ պարոնը իրան անուանելով գործին ծանօթ, մինչդեռ իր նամակներից երևում է գործից բոլորովին տեղեկութիւն չունենալը։ Ընկերութիւնը եղել է 66 թվին և վերջացել է 68-ին և բաղկացած ութ պատանեակներից նպատակ էին դրել իրանց փոքրիկ գումարով օգնել աւերած վանքերին։ Վասն որոյ երբ ընկերներս ցրվեցան միայն մնացինք երեք անձինք. փողի գումարն էր 31 ր. 35 կ.։ Մեզանից Նազարէթ Փահլուանեանցը պահանջմամբ ստացաւ երեք մասից մէկը՝ տասն բուբլի քառասուն և հինգ կոպէկ, որ ստացականը մինչև ցայժմ կը մնայ. իսկ մնացեալի վրա մեզանից աւելացնելով մի ջահ գնեցինք ալէքսանդրապոլցի վաճառական պ. Կարապետ Ջալթիկեանցից ի ներկայութեան պ. Մկրտչի Քեանդարեանց և պ. Մահտեսի Նազարէթի Կոստանեանց ընծայեցինք Հաւիճոյ վանքին որ այժմ կենդանի վկայ է այնտեղ։

Վերջացնելով իմ համառօտ պատասխանը, խնդրում եմ այդ պ. Ալէքսանդրապոլցուց և պ. Բաբաջանեանցից որ ես այստեղ, նոքա այստեղ անձամբ կարող են դալ և հաշիւ տեսնել. ինչու համար առաջնորդ հայրիկին դլխացաւութիւն լինի։

Պ. խմբագիր, խնդրում եմ ընդունել այս փոքրիկ նամակս ձեր պատուական լրագրի մէջ գործի խկութիւնը երևան հանելու և մեր ընթերցող եղբարց մեզ վրա թիւր դաղափար չը կազմելու համար, ցաւեցնելով և այս որ աւելի յանցաւոր է այն անձն որ ականատես և ներկայ լինելով սրբալ տեղեկութիւններ է տուած նամակագրին։

Պետրոս քահանայ Մատնիչեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Իգդիր, 21 սեպտեմբերի

Ձեր խմբագրութիւնը յայտնում է մեզ թէ Իգդիրում հաւաքած նուիրատուութիւնները բոլորը (?) ստացել ենք յօգուտ «Արարատեան ընկերութեան»։

Այժմ յայտնում եմ ձեր խմբագրութեանը. Իգդիրում հաւաքված են յօգուտ «Արարատեան» ընկերութեան նուիրատուութիւններ երեք անգամ։

ա. Հաւաքված Իգդիրու ժողովրդից և ուղարկված է ազգասէր Հմայակ վարդապետ Արշարունու ձեռամբ 46 ր. այդ ճիշդ էր, ուղարկված էր, տեղեկացանք ձեր պատուական թերթի միջոցաւ։

բ. Հաւաքված է Իգդիրու երկսեռ ուսումնարանների աշակերտներից և աշակերտուհիներից 23 ր. այդ էլ ճիշդ էր կարդացինք «Մշակի» մէջ մայիսի 15-ին 1879 ամի։

գ. Հաւաքվեցաւ Իգդիրու նորահաս երիտասարդներից կրկին նոյն ազգասէր և գերապատիւ Հմայակ Արշարունու ձեռամբն ուղարկված. 220 ր. աւել կամ պակաս *)։ Ահա այս վերջին գումարի համար ձերդ գերապատիւ խմբագրութենէն տեղեկութիւն կը խնդրեմ, հասած է թէ ոչ։

Իգդիրցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ԵՐԵԱՆԻՑ. «Մեր քաղաքային վարչութեան համար օրերումս ընտրվեցան իրաւասուներ, որոնք թիւով 66 են։ Դրանց մի երրորդականը մահմետականներն են կազմում։ Ասում են, որ հոկտեմբերի 1-ից կը սկսվեն քաղաքային վարչութեան նիստերը։»

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնած էի «Մշակի» 99 համարում, Եղիշէ վ. Մեծատունեանի յօրինած «Երգարան աղջկանց և աշակերտուհեաց հայկական ուսումնարանաց» վերնագրով գրքոյկը՝ արդէն մամուլի տակ է և շուտով կը հրատարակվի. յիշեալ Մեծատունեանցն յօրինում է նաև մի վիպասանութիւն «Էշ ոսկեղէն» վերնագրով նոյն և «Բուրաստան սիրոյս» վերդասութեամբ մի տաղարան, որը բաղկանում է 12 հատորից, իւրաքանչիւր հատորը մի մի տպագրական թերթերից։ Մօտ օրերս տպագրատան կը յանձնվի առաջին հատորը։»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՈՆ, 25 սեպտեմբերի (7 հոկտեմբերի)։ Մինիստրների խորհրդարանն երէկուայ նիստում պարլամէնտի արտաքոյ կարգի նստի վերաբերութեամբ ոչինչ վճռահատութիւն չը տուեց։ Հրաւիրանքի հարցը բաց է թողած։ «Times» լրագիրը նկատում է, որ բրիտանական կառավարութեան քաղաքականութիւնն Աֆղանիստանի վերաբերութեամբ, միայն Կաբուլի առումից յետոյ կորոշվի. երբ այդ ժամանակը կը հասնի, այն ժամանակ անհրաժեշտ կը լինի հարցնել պարլամէնտի կարծիքը. մինիստրութիւնը վստահ է, որ այդ ժամանակը շուտով կը ներկայանայ։

ՎԻԵՆՆԱ, 25 սեպտեմբերի (7 հոկտեմբերի։) Աւստրիական ռէյխսրատի այսօրուայ նոր բացմանը ներկայ էին բոլոր մինիստրները. նախագահը ժողովին ներկայացրեց Նէգրէլլին, որը ամենից հասակաւոր էր, և որը երդումն ընդունելով, յայտնեց պալատին իր ջերմեռանդ բարեմաղթութիւնները, քարտուղարներ նշանակեց, և պատգամաւորներին երդման հրաւիրեց։ Բոլոր պատգամաւորներն առանց ընդդիմադրութեան երդում ընդունեցին։ Վաղը Ֆրանց-Յովսէփը հանդիսաւոր կերպով կը բանայ պատգամաւորների ժողովի առաջին նիստը։ Բարձր Գայմէրլէ հասաւ Վիէննա։

ԲԵՐԼԻՆ, 25 սեպտեմբերի։ Բերլինու այսօրուայ ընտրված բոլոր տասը պատգամաւորներն էլ յառաջադիմական կուսակցութեան են պատկանում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 սեպտեմբերի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ «Русская Правда» լրագիրը երրորդ նախազգուշութիւն ստացաւ, և 5 ամսով արգելվեցաւ։

ՈՒՖԱ, 26 սեպտեմբերի (7 հոկտեմբերի։) Այսօր Ուֆայի մէջ այրվեցան 40 տներ և նահանգական դատարանի կիսակատար շէնքը։

ՎԻԵՆՆԱ, 26 սեպտեմբերի (7 հոկտեմբերի։) Անդրաշի հրաժարական տուեց։ Աւստրիական Ռէյխսրատի բացման ժամանակի գահական ճառն ասում է. Աւստրիայում բնակվող բոլոր ազգաբնակութիւնները հաւասար իրաւունքներ պէտք է վայելեն. առանձին ձրգտումների արտայայտութեան միջոցին փոխադարձաբար զիջողութիւն և իրաւունքների փոխադարձաբար յարգանք պէտք է լինի։ Ճառը վերջանում է հետևեալ խօսքերով. «Աւստրիան, հաւատարիմ մնալով պատմութեանն և իր ազնիւ կոչմանը, պէտք է պահպանէ և պաշտպանէ անքակտելի կապերով իր նահանգների և իր ժողովրդի իրաւունքները. մի և նոյն ժամանակ նա իրաւասութեան և ճշմարիտ ազատութեան հաստատ նեցուկ կը լինի։

Կ. ՊՕԼԻՍ, 26 սեպտեմբերի (7 հոկտեմբերի։) Նորերս սուլթանն ընդունեց Լօրանսօվ-Լոստօվսկուն և ընծայեց նրան իր սեփական ախոռներից մի հիանալի արաբական ձի։ Հաւիդի ռուսաց դեսպանին ցոյց տուած ուշադրութիւնն, ինչպէս երևում է նրա անձնական յարաբերութիւններից, միշտ աւելի ու աւելի է աճում։ Լօրանսօվ-Լոստօվսկիի հետ ունեցած սուլթանի վերջին տեսութիւնը մանաւանդ սաստիկ բարեկամական բնաւորութիւն ունէր. սրա համար էլ այս տեսակցութեան այստեղ չափազանց մեծ նշանակութիւն են տալի, որովհետև դա ապացոյց է երկու ազգերի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնների։ Ծախսերը կրճատելու պատճառով, Բ. Դուռը դիտաւորութիւն ունի արձակել բոլոր դեսպաններին, և նրանց փոխարէն պահել մեծ պետութիւնների մօտ միայն հաւատարմատար անձինք, որոնք կը հոգան պետական գործերը. ոմանք ասում են, որ իբր այս կարգադրութիւնն իրագործված է միայն ժամանակաւորապէս Լօնդոնի և Վիէննայի թիւրքական դեսպանների վերաբերութեամբ։

ՅԷՏԻՆԻԷ, 26 սեպտեմբերի (7 հոկտեմբերի)։ Զէրնօգօրցիք, վախենալով թէ մի գուցէ Գուսեան և Պլավեան նահանգների մերձակայ դրաւման միջոցին, ժողովված բազմաթիւ ալբանցիները զէնքով դիմադրութիւն գործեն, դրա համար էլ նրանք կռւի առաջն առնելու համար բոլոր պատրաստութիւններ են տեսնում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 50½ կ., երկրորդ 93 ր. 50½ կ., երրորդ 93 ր. 50½ կ., չորրորդ 93 ր. 62½ կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 227 ր., երկրորդ 222 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 91 ր. 62½ կ., երկրորդ 91 ր. 50 կ., ոսկի 7 ր. 70 կ.։ Տրամադրութիւնն ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

*) Այդ գումարը մենք դեռ ևս չենք ստացել։ Խմբ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հռիփսիմէ Առաքելեան Պետրոսեանց (Գրիգորեանցը) և Զաքարիա Պետրոսեան Գրիգորեանցը յաւօք սրտի յայտնում են՝ առաջինը իւր ամուսնոյ և երկրորդը իւր հօր՝ ՊԵՏՐՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՊԵՏՐՈՍԵԱՆՑԻ (Գրիգորեանցի) մահը. վանորոյ խընդրում են իւրեանց ազգականներին և ծանօթներին պատիւ տալ իւրեանց ներկայութեամբը հանգուցելոյ յուղարկաւորութեանը որ կատարվելու է կիրակի՝ ամսիս 30-ին ժամը տասնին իւր սեփական տնից (№ 24) Նիկողոսեան փողոցի վերա սուրբ Աստուածածնայ եկեղեցին—Միքայէլեան կամուրջի մօտ:

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԸ խնդրում է այն անձանց, որոնք իրան հետ զրաղրութիւն ունէին, այսուհետև իրանց մասնաւոր նամակներն ուղղել դէպի Երևան, ուր նա այս տարի պիտի մնայ ուսուցչական պաշտօնով, իսկ պատուէրները ըստ առաջնոյն թող ուղղեն Կենտրօնական զրավաճառանոց, ուր ինքը պահպանում է իւր մասնակցութիւնը: Երևան քաղաքի և նորա շրջակաների ուսումնարանների վարչութիւնները՝ դիւրութեան համար, իրանց դրամաւոր պատուէրները կարող են ուղղել նոյնպէս և դէպի պ. Տէր Ղևոնդեանը, որը կաշխատի ամենայն արագութեամբ կատարումն տալ նոցա պահանջներին: Ցեռոյ վճարելու պայմանով զրքեր ցանկացողները դիմում են ուղղակի զրավաճառանոց:

1—3

ՁԻՒԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԷԳԻԱՅԻ ՄԱՐԲԸՆԴ ՁԻՒԹԻՑ, որ պատրաստված է Մոսկվայի դեղագործ:

ԳԻՐՇՖԷԼԴՏԻՑ

Գիւոյի Ֆրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնագործութեամբ և որովհետև պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում, բացի մաքուր Ձիւթից, ես առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖՐԱՆՍԻԱԿԱՆ (ԳԻՒՈՅԻ) ՊԱՏԻՃՆԵՐԻՑ 40% էժան:

Յոյս ունեմ, որ ռուս բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետև նոքա առիթ չունեն ռուսաց փողերով պահպանել ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՐԴԻՒՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր դեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մոսկվայում, Լուբեանսկի դեղատուն Նա. Ի. Գիրշֆէլդտի և Ր. Կեօլեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Յուրինովի և Բոստոմովի դեղատուն:

14—25

ՎԱՃԱՌՔ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ

ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏԻ ՎՐԱ, ՇԻՕԵՎԻ ՏԱՆԸ, պ. Միրզոյեվի ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒՄ, Լուսանկար Վեստլիի կարգին, ԿԻՐԱԿԻ ՆԵՐԿԱՅ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-ից ըսկսած **ԵԿՈՂ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ** ամբողջ ամսվայ **ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԽՎԵԼՈՒ** են 250-ից աւելի **ՁԻԹԱՒՈՐ ՊԱՏԿԵՐՆԵՐ** զանազան մեծութեան, ամեն տեսակ բովանդակութիւնների (չը բացառելով և կրօնականները, որոնք պիտանի են եկեղեցիների համար:) **ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՐԵՒԵԼԻ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻՆ ԵՆ** և դրված են հարուստ ոսկեզօծած մաքուր շրջանակների մէջ: **ՄՈՒՏՔԸ ԱՆԿԱՐՃ Է:** Նոյեմբերի 1-ից յետոյ վաճառքը կը դադարեցնվի, որովհետև մնացած պատկերները կուղարկվեն:

2—10

Ահաւասիկ այն բարեսէր ազգայինք որ հաճեցան յանձն առնուլ նպաստ հաւաքելու «ԴՊՐՈՑԱՍԻՐԱՑ—ԱՐԵՒԵԼԵԱՆ» ընկերութեան համար: ԹԻՖԼԻՍ. Պ. Աբգար Յովհաննիսեան Պետրոս Սիմոնեան, բժիշկ Աւետիք Բաբայեան: ԵՐԵՒԱՆ. Ռուբէն Զալալեան, Վասիլ Եղիազարեան, Սարգիս Բէզնազարեան, Տիգրան Աւիրիկեան: ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ. Աբիսողոմ Յովհաննիսեան, Հայրապետ Ղուկասեան: ԱԽԱՇԿԱՔ. Արժ. Տէր Խորէն քահանայ: ԱԽԱԼՑԽԱ. պ. Գասպար Մելքոմեան, Մկրտիչ Ճարակեան, Մովսէս Սամուէլեան, Յովակիմ Դեղամեան: Այդ անձեր են որք յուսադրեցին զիս ամէն միջոցներով ընկերութեան դպրոցներուն օգտին աշխատել:

Յ. ՇԱՀՆԱԶԱՐ

5—5

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ:

Դուրս եկաւ ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ «Ծերենցի—ԵՐԿՈՒՆՔ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ.» վերնագրով—Թորոս Լևոնի հեղինակի նոր աշխատասիրութիւնը:

ԳԻՆՆ Է ԱՄԷՆ ՏԵՂ ՄԻ ՌՈՒԲԼԻ: Այս օրերս մամուլի տակ կընկնի պ. Հ. Ղուկասեանցի աշխատասիրած ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ հին դարը Զաք. Գրիգորեանցի հրատարակութեամբ:

Вышла въ нѣмецкомъ переводѣ г. А. Амирханянца лекція Григорія Арцруни «Объ экономическомъ положеніи армянъ въ Турціи.» Цѣна брошюры 25 копѣекъ.

3—5

ԾԱԽՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆՈՒՄ «ԳՈՒՐԶԻ» անուանված քարվանսարան, որ ունի 116 ԴՈՒՌՔԱՆ, 2 ՄԵԾ ՄԱԳԱԶԻՆ պահեստի համար, 2 ԱԽՈՒԱՆՈՑ, 2 ՍԵՆԵԱԿՆԵՐ խոհանոցով և ՄԵԾ ԱՒԱԶԱՆ մշտական ջրով: Սորա հետ ունի նմանապէս ԴԱՏԱՐԿ ՏԵՂ 4000 քառակուսի սաժէն: Ցանկացողները ՊԱՅՄԱՆՆԵՐԻ մասին կարող են դիմել Պ. ԲԱՂԴԱՍԱՐ ԽՈՍՐՈՎԵԱՆՑԻՆ, Թիֆլիսում, Դանովսկայա փողոցի վրա, ՍԵՓԱԿԱՆ ՏԱՆԸ:

14—20 (2)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
և
Տարրական Ուսումնարան

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 21-ին, իսկ ուսումը կը սկսվի սեպտեմբերի 5-ին 1879 թ:

Մանկական Պարտէզում ընդունվում են երկու սեռի մանուկներ 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ ուսումնարանում ընդունվում են 7-ից մինչև 14 տարեկան հասակը,

Ուսման ընթացքը այնպէս է յարմարեցրած, որ Ուսումնարանում թէ աղջիկ և թէ տղայ աւարտողները կարող են գիմնազիաների 1 և 2-րորդ դասատունները մտնել:

Սօլօլակի, Վելիամինովսկայա փողոց, Իշխ. Ամատունու տուն, № 11. 4—4

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29 — ՏԵՂԵԿԱՑՈՒՑ — ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Սեպտեմբերի 28-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլովինկերիաը)	8	15
Հին 84 պր. մ. արժ. 1000 մ.	1470	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1245	—
Վիդրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	238	—
Երկրորդ 5% վիդրինի »	237	—
Մարսելի կուրսը 266—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա	9	55
Վենայի կուրսը արժէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը	4	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ.	310	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	—	—
Շաքարը բրօցկու	7	30
» միւս տեսակը	7	15
» չաքար աւազը	5	75
» տրանզիտը	5	10
» մաքսը վճառած	10	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից	8	—
Միւս տեսակը հին սերմից	7	40
Բուրդը թուշի	7	50
» թարաքամի	4	—
Աւիւրը Շորագալու	2	20
» Երևանի	—	—
Գարին	1	40
Մոմը ընճարպի (стеар.)	12	40
Մետաքսը Նուխվայ	180	—
Կախեթունը	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	50	—
Ֆրիզոնը (լաստը) Ագուլեաց	65	—
Կօֆէն մօկօի	26	—
« լիւանի	22	—
« Մանտինյօն	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները	1	
Ռուսաստան	2	
Աւստրիա	3	
Անգլիա	4	
Գերմանիա	2	88
Ֆրանսիա	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծնողականների ընդունելութիւնը ցերեկվա և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան, Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խուռն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ:	երեկոյեան.
Թիֆլիսից	9. 21	5. 18
Գօրի	11. 58	9. 43
Միխայլօվօ	1. 29	11. 59
Ռիօն	6. 47	
Փօթի	9. 40	

	առաւօտ:
Փօթիից	9. 13
Ռիօն	12. 13
Միխայլօվօ	5. 39
Գօրի	7. 5
Թիֆլիս	9. 31

			1. 37
			4. 8
			7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ	90	68	38
Գօրի	3.20	2.40	1.33
Սուրամ	5.22	3.92	2.18
Ռիօն	9.	6.75	3.75
Փօթի	13. 1	9.75	5.42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ

	կոպ.
Բաց նամակ արժէ	2
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	7
Ամերիկա	7
Պարսկաստան	7
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9-ից մինչև 1 ժամը:

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալևվիչ ներքին հիւանդութիւնների, Քուչարեանց վիրաբուժական և աչքի հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ.:

Երեքշաբթի. Մինկէվիչ վիրաբուժական հ., Ռէյխ աչքի հ., Վերմիշէվ ներքին հ., ժուրավլէվ վներական և կաշու հ., Բաբով կրծքի և ներքին հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Աստուածատուրով կանանց հ.:

Հինգշաբթի. Վերմիշեվ և Բուդկովսկի ներքին հ., Քուչարեանց սիֆիլիսի և միզային գործարանների հ., ժուրավլէվ ջղային հ.: Բաբով կրծքի և ներքին հ.:

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բաբաեվ ջղային և հոգեկան հ., Աստուածատուրով վներական և կաշու հ.:

Շաբաթ. Վերմիշեվ ներքին հ., Ռէյխ աչքի հ., ժուրավլէվ վներական և կաշու հ.:

Օքրէխա, ատամի հ., ընդունում է իր տանը ամեն ժամանակ աղքատ հիւանդներին Բժշկանոցի տոմսակով:

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԱՍՏՐԱԽԱՆ. ***. Չը կարողացանք իմանալ, թէ ձեր յօդուածը ինչ բարբառով է գրած: Անյարմար է տպագրութեան համար:

—ԱԽԱԼՔԱԼԱՔ. Ականատես. Արժէ մի՞թէ պատասխանել զանազան Վայերին: Մի՞թէ չէք ափսոսում ձեր ժամանակը: Խորհուրդ ենք տալիս ուրիշ հարցերով զբաղվել:

—ԱԽԱԼՑԽԱ. ***. Նամակը մի քանի փոփոխութեամբ կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ:

—ՇԱՄԱԽԻ. Ռուսիահայ. «Բոստանչի Մարտիրոս» վիպասանութեան շարունակութիւնը զամբիւղը գցեցինք: Մի անգամ արդէն պատասխանել ենք, որ շարունակութիւնը չուղարկէք:

—ԹԻՖԼԻՍ. Յ. Թ. ԷՐ տպենք ձեր նամակը նշանաւոր փոփոխութիւններով:

Дозволено Цензурою 28 Сентября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона